

«Ա.Դ. Սախարովի անվ. մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն»

Գեղարքունիքի տարածաշրջանային մասնաճյուղ



ՄԱՍՈՒԼԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Օ Գ Ո Ս Տ Ո Ս

2021 թ.

31.08.2021

Սառա Պետրոսյան

Կառավարությունն անտեսեց ՄԴ որոշումը՝ համայնքները խոշորացնելու համար տեղական հանրաքվե չի իրականացվի

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների (ՏԿԵ) նախարարությունը Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում քննարկման է ներկայացրել [37 համայնքի](#) միավորման [նախագիծ](#):

Դեկտեմբերի 5-ին Հանրապետությունում տեղական ինքնակառավարման ընտրություններ են նախատեսվում, որով Հանրապետությունում կավարտվի 2015թ.-ից մեկնարկված համայնքների խոշորացման գործընթացը: Այն շարունակաբար քննադատվել է, սակայն անցնող 6 տարվա ընթացքում խոշորացման գործընթացը փոփոխությունների չի ենթարկվել՝ անկախ այն հանգամանքից, որ երկրում իշխանափոխություն տեղի ունեցավ, և իրավական կարևոր ակտեր կայացվեցին:

Այդ նախագծերը մեկ անգամ արդեն քննարկման էին դրվել 2020թ. դեկտեմբերին և քվեարկողների բացարձակ մեծամասնությունը՝ 93%-ը, դեմ էր քվեարկել նախագծերին: Ամենաքննարկվողը Կոտայքի մարզի Աբովյան համայնքի խոշորացման նախագիծն էր: Գրառման հեղինակները ծավալուն մեկնաբանություններով հիմնավորել էին, թե ինչու համաձայն չեն դեռևս 2017թ.-ին 8 գյուղի միավորումով ձևավորված Ակունք համայնքը մեկ անգամ ևս Աբովյան համայնքի հետ միավորելուն: ՏԿԵ նախարարությունը տեղեկացնում է, որ ստացված առաջարկությունների հիման վրա նախագծերը լրամշակվել են և կրկին դրվում են հանրային քննարկման: Մասնավորապես՝ Աբովյան համայնքի միավորման նախագծից Ակունք համայնքը հանվել է:

Մեկ անգամ արդեն խոշորացված համայնքն այս [նախագծով](#) միավորվելու էր մոտ 45 000 բնակիչ ունեցող Աբովյան քաղաքի հետ: Աբովյանի հետ միավորվելու են նաև Առինջ, Արամուս, Բալահովիտ, Գեղաշեն, Գետարգել, Կաթնաղբյուր, Կամարիս, Մայակովակի, Պտղնի, Վերին Պտղնի համայնքները: Թվարկված 10 գյուղի բնակչությունը միասին 26 470 է: Այսինքն՝ միավորելուց հետո այս համայնքի բնակչության ընդհանուր թիվը կկազմեր **80 685** մարդ: Նոր նախագծով Աբովյան քաղաքի հետ միավորվելու են նշված 10 գյուղը՝ 71 470 բնակչով:

Կառավարության իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում դժգոհություններ կային նաև այլ համայնքային միավորումների վերաբերյալ, բայց նախորդ նախագծերի հետ արված համեմատությունը ցույց տվեց, որ դրանք փոփոխության չեն ենթարկվել:

Ամենակարևոր հարցն այն է, որ Կառավարությունը չի ցանկանում տեղական հանրաքվե իրականացնել ընտրություններից առաջ՝ միավորվող համայնքների վերաբերյալ բնակչության կարծիքն իմանալու համար: Տեղեկացվում է, որ «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելը լրացուցիչ ֆինանսական միջոցների պահանջ չի առաջացնում, իսկ ՀՀ-ի պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում: Նախարարությունը տեղեկացնում է, որ միավորվող համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների հետ (նաև բնակիչների հետ «Town Hall» ձևաչափով) համայնքային ժողովներ են կազմակերպվել, որոնց արդյունքներով մշակվել է համայնքների միավորման նախագծերը:

Եթե նույնիսկ ընդունենք, որ համայնքային ժողովներն իրականություն են, չնայած դրանք հավաստող որևէ փաստաթուղթ չի հրապարակվել, միննույն է, ըստ ՄԴ-ի արտահայտած դիրքորոշման, այն բավարար չէ բնակչության մեծ թիվ ունեցող համայնքները միավորելու դեպքում:

ՄԴ-ն հայտնել է, որ համայնքների միավորման կամ բաժանման գործընթացում հանրային լուսմաների և քննարկումների միջոցով համայնքի տեսակետը լսելի դարձնելու գործիքակազմն արդյունավետ կարող է լինել, երբ համայնքի բնակիչների թիվը փոքր է: Մեծաթիվ բնակչություն ունեցող համայնքների դեպքում միայն հանրային լուսմաները կամ քննարկումները բնակիչների օբյեկտիվ կարծիքը վեր հանելու իրական հնարավորություն չի տալիս:

Իսկ այս նախագծերում մեծ թիվ են կազմում նախկին շրջաններով համայնքները միավորելը կամ մեկ անգամ արդեն խոշորացված համայնքները կրկին խոշորացնելու օրինակները: Անգամ իր մեծությամբ Հանրապետության երրորդ քաղաք Վանաձորի հետ մի քանի գյուղ են միավորելու, որի արդյունքում բնակչության թիվը կանցնի 100 000-ը: Կնշանակի՝ համայնքային ժողովներն այս դեպքերի համար բավարար չեն:

Հիշեցնենք, որ ՄԴ-ն որոշումը կայացրել էր Կոտայքի մարզի Աբովյան, Ծաղկաձոր և Նոր Հաճն համայնքների ղեկավարների **դիմումի** հիման վրա: Նրանք դատարան էին դիմել այն հիմքով, որ «Տեղական հանրաքվեի մասին» օրենքում կատարված փոփոխությունների արդյունքում համայնքի ղեկավարը զրկվել է համայնքները միավորելու կամ բաժանելու հարցով տեղական հանրաքվե նախաձեռնելու իրավունքից:

Սահմանադրական դատարանը 2021թ. մայիսի 14-ին կայացրած ՄԴՌ-1593 **որոշումով** իրավական դիրքորոշում է արտահայտել երկու կարևոր հարցի վերաբերյալ՝

1. համայնքի կարծիքը տեղական հանրաքվեի միջոցով արտահայտելու իրավունքի արդյունավետ իրականացման համար օրենսդրական անհրաժեշտ կառուցակարգեր և ընթացակարգեր պետք է նախատեսվեն:
2. Համայնքային բյուջեում ֆինանսներ չլինելու պատճառաբանությամբ տեղական հանրաքվեի մերժումը իրավաչափ չի համարել: Առաջարկել է տեղական հանրաքվե նախապատրաստելու և անցկացնելու համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայության կամ անբավարարության դեպքում ծախսերը կատարել պետական բյուջեի միջոցների հաշվին:

Դատարանը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչեց երեք համայնքի ղեկավարների կողմից «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի վիճարկվող դրույթները: **Բարձրագույն դատարանը այս որոշումով իշխանություններին հորդորեց մշակել համայնքի կարծիքը լսելի դարձնելու նոր գործիքակազմեր**, և «Վարչատարածքային բաժանման մասին» օրենքն ընդունելիս ԱԺ-ն պետք է առաջնորդվի այս որոշման շրջանակում դատարանի արտահայտած իրավական գնահատականներով, հիմք ընդունի արտահայտված դիրքորոշումները:

Կառավարությունը կրկին անտեսեց ՄԴ որոշումը՝ ոչ միայն հանրաքվե անցկացնելու մտադրություն չունի, այլև համայնքի կարծիքը լսելի դարձնելու նոր գործիքակազմեր չկիրառեց:

Նույն մտահոգությունն ավելի վաղ՝ 2016թ.-ին, հայտնել էր Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը՝ քննելով Տավուշի մարզի խոշորացվող համայնքների բնակիչների դիմումները: Հրապարակված զեկույցով Պաշտպանը մտահոգիչ էր համարել, որ

- համայնքների խոշորացման գործընթացի ծավալների ընդլայնումն իրականացվել է մասնագիտական շրջանակներում և հատկապես հասարակության մեջ չվերացած իրարամերժ

դիրքորոշումների, գործընթացի վերաբերյալ շահագրգիռ լայն բնակչության շրջանում ոչ բավարար իրազեկվածության պայմաններում:

- Համայնքի կարծիքը լսելու սահմանադրական պահանջի բովանդակությունը չի կարող սահմանափակվել համայնքների կարծիքի ինքնանպատակ լսումով՝ առանց որևէ իրավական հետևանքի:
- Անհրաժեշտ է հրապարակային ժամանակացույցի հիման վրա իրականացնել քննարկումներ՝ հնարավոր բոլոր դեպքերում ներգրավելով ԶԼՄ ներկայացուցիչներին: Այդ քննարկումները պետք է արվեն առանձին փուլերով և նախատեսված լինեն ինչպես մասնագիտական շրջանակների, այնպես էլ համայնքային բնակչության լայն շերտերի, գործընթացի ազդեցության հետևանքներն անմիջականորեն իրենց վրա կրող թիրախային խմբերի համար:

<https://hetq.am/hy/article/135179>

31.08.2021

Ադրբեջանցիները սահմանի երկայնքով հրդեհ են առաջացնում. եթե դեմը չառնեն, հնարավոր է՝ հասնի տներին. համայնքապետ

Արդեն երեք օր է՝ հրդեհները շարունակվում են Գեղարքունիքի մարզի Կուլթ եւ Սոթք համայնքների տարածքներում: Այս մասին [NEWS.am](https://news.am)-ի հետ զրույցում նշեց Գեղամասար խոշորացված համայնքի ղեկավար Հակոբ Ավետյանը:

Նրա խոսքով, եթե մի տեղ կրակը հանգցնում են, մի ուրիշ տեղ է սկսվում հրդեհը. «Ադրբեջանցիները կրակելու միջոցով հրդեհներ են առաջացնում: Իրենք սահմանի երկայնքով մասշտաբային դա անում են: Այս պահի դրությամբ հրդեհներ են Կուլթ եւ Սոթք համայնքների ուղղությամբ, որի դեմ պայքարում են թե ԱԻՆ-ը, թե բնակիչները, բայց մինչև մեկը հանգցնում են, մեկ ուրիշ տեղում են հրդեհ առաջացնում: Սոթքում էլ, Կուլթում էլ մարդկանց խտհարքներն անցել է հրդեհի տակ: Քաղած խոտը հրդեհվել է: Հրդեհն արագ տարածվում է: Եթե հիմա ասեմ 20 հա է այրվում, կարող է 20 րոպե հետո դառնա 30 հա: Շատ դժվար է հրդեհի մարումը: Բարձր տեղերն անհանսանելի են տեխնիկայի համար: Բացի դրանից, մեզ մոտ քամիներն է ուժեղ, ինչը արագ բռնկումը տարածում է», -ասաց Ավետյանը:

Նա ընդգծեց, որ հրդեհ առաջացնելու համար ավտոմատով չեն կրակում. «Ես չգիտեմ՝ ինչ միջոց են օգտագործում: Օրինակ, նախորդ օրը տեսել են սայլուտի պես մի բան եկել, ընկել է գյուղին շատ մոտ հատվածում: Նշանակում է՝ ինչ-որ վառվող բան կարողանում են հասցնել մեր դաշտերին: Բացի այն, որ արոտավայրերն անցան իրենց վերահսկողության տակ, մնացածն էլ հրդեհի միջոցով են ուզում վնասել: Երբ որ կարողանանք հրդեհի օջախները մարել, դրանից հետո կկարողանանք հստակ ասել, թե քանի հեկտար է այրվել»:

Համայնքի ղեկավարը չբացառեց, որ կրակը կարող է հասնել մարդկանց տներին. «Շատ հնարավոր է, եթե դեմը չառնեն: Բայց գյուղին մոտենալու դեպքում ավելի հեշտ կլինի մարելը, որովհետև հարթ տարածություններ են, տեխնիկական կարող է ավելի լավ աշխատել»:

<https://news.am/arm/news/660654.html>

31.08.2021

ՏԵՍԱՆՅՈՒԹ. Աղբբեջանցիները մտնում են, գյուղի խանութներից խմիչք տանում. գեղարքունիքցի

Սեւանի ավազանն է՞լ տանք, որ Ալիերը գա ոտքերը դնի մեջը հանգստանա՞, մենք «գդալ-գդալ» վերցրինք, իրենք «շերեփով» տվեցին թուրքին, ինչո՞ւ տվեցին մեր հողերը թուրքին. **Yerkir.am**-ի հետ զրույցում իր վրդովունքն է հայտնում Գեղարքունիքի մարզի Զոլաքար համայնքի բնակիչ պարոն Արարատը:

Ասում է՝ Աֆղանստանի պատերազմից սկսած՝ 6 պատերազմի մասնակից է, արյան գնով էին մեր պատմական հողերը հետ բերել, մի գրչի հարվածով կրկին տրվեց թուրքին: «Արցախյան պատերազմի մահապարտներից մեկն եմ եղել, եթե Վազգեն Սարգսյանը մի փոքր էլ «ոտքը կախ» գցեր, Բաքվով կմաքրեինք, դուրս կգայինք: Ես չհասկացա՝ էս պատերազմը սենց ո՞նց եղավ: Հայաստանում այսօր ոչ մի բանն էլ բանի նման չի: Մեր հողերը ինչո՞ւ տվեցին: Ալագյուլի (Ալ լճեր խմբ.) սարերը ամբողջ մարզին սպասարկում էրին, ինչի՞ տվեցին թուրքերին, ինչի՞ համար», - ասաց նա:

2020 թվականի Արցախյան պատերազմից մանրամասներ է պատմում, ասում է՝ կոփված, կովող, պատրաստի զինվորականներին չէին տանում ճակատ: «Կովող տղերքին չէին տանում ճակատ, նստեցնում էին սոված-ծարավ, թե՛ սպասեք, հաջորդ օրը լսում էինք՝ տարածքները տվել են: Էս էլ պատերազմը: Դուք ի՞նչ գիտեք, որ Զոլաքարի մեջ հիմա մի 20 թուրք չկա, ո՞վ գիտի: Թուրքի միակ նպատակը Սեւանա լիճն ա, Գեղարքունիքի մարզը: Աղբբեջանցիները մտնում մեր գյուղերի խանութներից օղի, զինի են առնում, ու դա տեղի է ունենում հիմա», նշում է պարոն Արարատը:

Մանրամասները դիտեք տեսանյութում՝ <https://www.youtube.com/watch?v=aaxDWCTwKEc>

Լիանա Սարգսյան

<http://yerkir.am/news/view/246680.html>

31.08.2021

Կուր զյուղում հրդեհը դեռ չի մարվել. 17 հրշեջ-փրկարար իրականացնում են հրդեհաշիջման աշխատանքներ. ԱԻՆ

Օգոստոսի 31-ին Կուր գյուղի տարածքում 17 հրշեջ-փրկարար իրականացնում են հրդեհաշիջման աշխատանքներ:

Հիշեցնենք, որ օգոստոսի 30-ին, ժամը 16:27-ին Գեղարքունիքի մարզային ճգնաժամային կառավարման կենտրոն

տեղեկություն է ստացվել, որ Կուր գյուղում այրվում է խոտածածկույթ:

<http://yerkir.am/news/view/246654.html>



31.08.2021

Վերահաստատում եմ՝ ադրբեջանական զինծառայողները Սոթքի և Կուլթի հարևանությամբ դիտավորյալ հրդեհներ են գցում. ՄԻՊ

Վերահաստատում եմ երեկվա իմ հայտարարությունը, որ ադրբեջանական զինծառայողները Գեղարքունիքի Սոթք և Կուլթ գյուղերի հարևանությամբ՝ իրենց վրանների մոտից, դիտավորյալ հրդեհներ են գցում: Այս մասին ֆեյսբուքյան իր էջում հայտնել է ՀՀ ՄԻՊ Արման Թաթոյանը:

«Ադրբեջանի Պաշտպանության նախարարությունն այսօր պաշտոնական հայտարարություն է տարածել՝ հերքելով իմ հրապարակած անհերքելի փաստերը:

Այս բոլոր փաստերը Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ են փոխանցել գյուղերի բնակիչները: Մենք դա հիմնավոր ստուգել ենք մի քանի աղբյուրից, այդ թվում՝ օբյեկտիվ ապացույցներով:

Երեկ մենք որոշեցինք հրապարակել ոչ բոլորը, բայց այսօրվա ադրբեջանական ՊՆ հերքումից հետո լրացուցիչ տեսանյութ-ապացույց եմ հրապարակում, որ հենց Կուլթ գյուղից է արված երեկ՝ ժամը 22:30-ի սահմաններում:

Այնպես որ, Ադրբեջանի Պաշտպանության նախարարությունը նպատակ ունի կոծկելու իրենց հանցավոր արարքները ՀՀ քաղաքացիական բնակչության նկատմամբ, այն էլ ՀՀ ինքնիշխան տարածքում, իսկ նրանց զինված ուժերը պետք է բացառեն ՀՀ քաղաքացիների իրավունքների խախտումները:

Բոլորը պետք է միշտ նկատի ունենան, որ Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանը հրապարակում է միայն հիմնավոր փաստեր ու կան ավելին, քան հրապարակված է: Դրանք բոլորը արձանագրվում և ուղարկվում են միջազգային կազմակերպություններին», - հայտնել է Թաթոյանը:

<http://yerkir.am/news/view/246629.html>

30.08.2021

Ադրբեջանական զինծառայողները դիտավորյալ հրդեհներ են գցել Սոթք և Կուլթ գյուղերի հարևանությամբ

Առավոտյան ժամը 11-ից ադրբեջանական զինծառայողները դիտավորյալ հրդեհներ են գցել Սոթք և Կուլթ գյուղերի հարևանությամբ՝ իրենց վրանների մոտից:

Օրվա ընթացքում ՀՀ Գեղարքունիքի մարզի Սոթք գյուղի ուղղությամբ հրդեհները մարվել են, իսկ Կուլթի հարևանությամբ հրդեհները չեն մարել ու տարածվել են եղանակային պայմաններից ելնելով: Այս մասին ասվում է ՀՀ ՄԻՊ Արման Թաթոյանի տարածած հաղորդագրությունում:

«Առավոտյան ժամը 11-ից ադրբեջանական զինծառայողները դիտավորյալ հրդեհներ են գցել Սոթք և Կուլթ գյուղերի հարևանությամբ՝ իրենց վրանների մոտից:

Օրվա ընթացքում ՀՀ Գեղարքունիքի մարզի Սոթք գյուղի ուղղությամբ հրդեհները մարվել են, իսկ Կուլթի հարևանությամբ հրդեհները չեն մարել ու տարածվել են եղանակային պայմաններից ելնելով: Հրապարակվող լուսանկարները ցույց են տալիս այս պահի վիճակը: Հատուկ եմ նշում, որ այս վայրերում համայնքների բնակիչների խոտհարքերն են ու արտոձայրերը, իսկ հրդեհներով դրանք պարզապես ոչնչացվում են: Հաշվի առնելով նաև, որ ադրբեջանական զինված ուժերը ներխուժել ու տեղակայված են գյուղերի անմիջական հարևանությամբ՝ ՀՀ

ինքնիշխան տարածքում, ապա հրդեհներն իրական վտանգ են ներկայացնում նաև գյուղերի քաղաքացիական բնակչության համար:

Բնակիչների ահազանգերի ստուգումները վկայում են, որ ՀՀ քաղաքացիական բնակչության նկատմամբ այս դիվերսիոն հանցավոր արարքերը կատարվում են դիտավորությամբ. նախ, ադրբեջանական զինծառայողները հստակ գիտակցում են, որ տեղակայված են քաղաքացիական բնակիչներին պատկանող արոտավայրերի ու խոտհարքերի, ինչպես նաև վարելահողերի մեջ և որ մարդիկ չեն կարողանում օգտագործել անգամ ադրբեջանական դիրքերի հարևանությամբ գտնվող տարածքները, քանի որ այդ վայրերին մարդկանց անգամ մոտենալու դեպքում նրանք արձակում են կրակոցներ:

Դրանից բացի, ադրբեջանական զինծառայողները գիտակցում են, որ ներկայում եղանակային պայմաններն այնպիսին են, որ հրդեհն արագորեն տարածվելու է ու ոչնչացնելու է մարդկանց պատկանող տարածքները, զրկելու են ապրուստի աղբյուրից: Եվ հետո, նրանք գիտակցում են նաև, որ բնակիչները նույնպես տեսնելու են այս հրդեհները և դա ակնհայտորեն անում են քաղաքացիական բնակչությանը վախեցնելու նպատակով:

Երեկ էի նշել, որ ադրբեջանական զինված ուժերի հեռանալը ՀՀ գյուղերից և համայնքների միջև ճանապարհներից այլընտրանք չունի՝ երաշխավորելու համար ՀՀ սահմանային բնակիչների իրավունքները, մարդկանց խաղաղ ու անվտանգ կյանքը:

Մյունիքում, Գեղարքունիքում ու Արարատում ադրբեջանական վերջին ժամանակաշրջանի արարքների, այդ թվում՝ կրակոցների փաստերը վկայում են, որ դրանք դառնում են ավելի ու ավելի վտանգավոր քաղաքացիական բնակիչների համար, ունեն ուղղակի դիտավորություն, դարձել են թիրախային, իսկ իրավունքների խախտումներն կրում են զանգվածային բնույթ: ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի այս հերթական հաղորդումը երկուշաբթի օրը՝ օգոստոսի 30-ին համապատասխան առաջարկներով կամ պահանջներով պաշտոնապես կուղարկվի միջազգային կառույցներին, ինչպես նաև ՀՀ պետական մարմիններին ու ՀՀ քաղաքացիական հասարակության կազմակերպություններին»:

<https://armday.am/post/185957>

29.08.2021

Հակառակորդը տարբեր տրամաչափի հրաձգային զինատեսակներից կրակ է բացել հայկական դիրքերի ուղղությամբ

Պաշտպանության նախարարությունը տեղեկացնում է, որ օգոստոսի 29-ին՝ ժամը 00:20-ից սկսած, ադրբեջանական ԶՈՒ ստորաբաժանումները տարբեր տրամաչափի հրաձգային զինատեսակներից կրակ են բացել հայ-ադրբեջանական սահմանի Գեղարքունիքի մարզի, մասնավորապես՝ Սոթքի հատվածում տեղակայված հայկական դիրքերի ուղղությամբ, ինչի հետևանքով, հայ դիրքապահների պատասխան գործողություններից հետո, ծավալվել է ինտենսիվ փոխհրաձգություն, որը տևել է շուրջ երկու ժամ:

Ժամը 02.25-ին ադրբեջանական դիրքերին է մոտեցել շտապ օգնության մեքենա, ինչից հետո հայկական կողմը դադարեցրել է կրակը՝ հնարավորություն տալով տարհանել հակառակորդի վիրավորներին:

Հայկական կողմից տուժածներ չկան:

<https://hetq.am/hy/article/135089>

Ադրբեջանական կրակոցները Կուրթ գյուղի տներից մեկի պատը վնասել են բակում կանգնած երեխայի անմիջապես հարևանությամբ. ՄԻՊ

Ադրբեջանական երեկվա կրակոցները Կուրթ գյուղի տներից մեկի պատը վնասել են բակում կանգնած երեխայի անմիջապես հարևանությամբ: Այս մասին իր ֆեյսբուքյան էջում հայտնում է ՀՀ ՄԻՊ Արման Թաթոյանը:

«Ադրբեջանական երեկվա կրակոցները Կուրթ գյուղի տներից մեկի պատը վնասել են բակում կանգնած երեխայի անմիջապես հարևանությամբ: Այդ նշանառու կրակոցների պահին տան բակում են գտնվել տարեցներ ու երեխաներ: Տան մեջ այդ պահին եղել են նաև մանկահասակ երեխաներ:

Մասնավորապես, օգոստոսի 27-ին (երեկ)՝ ժամը 22-ի սահմաններում ադրբեջանական զինված ուժերն նշանառու ինտենսիվ կրակահերթ են սկսել ՀՀ Գեղարքունիքի մարզի Կուրթ գյուղի քաղաքացիական տների վրա՝ ուղիղ թիրախավորելով քաղաքացիական բնակչությանը:

Կրակոցների արդյունքում վնասվել է 10-ից ավելի տուն՝ տանիքներ ու պատեր, որոնց վրա ոչ միայն կրակոցների հետքերն են, այլ նաև պատերի մեջ կան պարկուճներ:

Կրակոցները եղել են տարբեր տրամաչափի զինատեսակներով ու դադարել են ժամը 23-ի սահմաններում: Հրապարակվում է մի քանի լուսանկար, որոնցից մեկն էլ ցույց է տալիս, թե կոնկրետ որ ուղղությունից են արձակվել կրակոցները:

Այս կրակոցները բացահայտ խախտում են մարդկանց կյանքի ու սեփականության իրավունքը, խաթարում են քաղաքացիական բնակչության, այդ թվում՝ երեխաների, կանանց, տարեցների անվտանգությունը, նրանց խաղաղ ու բնականոն կյանքը:

Երեկվա դեպքը ևս մեկ անգամ հաստատում է, որ ադրբեջանական զինված ուժերի հեռանալը ՀՀ գյուղերից և համայնքների միջև ճանապարհներից այլ ընտրանք չունի: Միայն սա կարող է երաշխավորել ՀՀ սահմանային բնակիչների իրավունքները, ապահովել մարդկանց խաղաղ ու անվտանգ կյանքը:

Սյունիքում, Գեղարքունիքում ու Արարատում ադրբեջանական վերջին ժամանակաշրջանի արարքների, այդ թվում՝ կրակոցների փաստերը վկայում են, որ դրանք դառնում են ավելի ու ավելի վտանգավոր քաղաքացիական բնակիչների համար, ունեն ուղղակի դիտավորություն, դարձել են թիրախային, իսկ իրավունքների խախտումներն կրում են զանգվածային բնույթ:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի այս հերթական հաղորդումը երկուշաբթի օրը՝ օգոստոսի 30-ին համապատասխան առաջարկներով կամ պահանջներով պաշտոնապես կուղարկվի միջազգային կառույցներին, ինչպես նաև ՀՀ պետական մարմիններին ու ՀՀ քաղաքացիական հասարակության կազմակերպություններին»:

<https://news.am/arm/news/660284.html>

25.08.2021

Սառա Պետրոսյան

Համայնքների ղեկավարների նկատմամբ Կառավարությունը խտրական մոտեցում է դրսևորել

Հայաստանում վերջին անգամ տեղական ինքնակառավարման մարմինների լայնամասշտաբ ընտրություններ տեղի են ունեցել 2016թ.-ին, և այդ համայնքներում այս տարի լրանում է ՏԻՄ-երի պաշտոնավարման հինգ տարին: Բազմաթիվ համայնքներում արդեն իսկ լրացել է ընտրված համայնքի ղեկավարի և ավագանու լիազորությունների ժամկետը: Կառավարությունն այդ համայնքների մի մասում համայնքի ղեկավարի պաշտոնակատար է նշանակել, մի մասում՝ պաշտոնավարման ժամկետները լրացած համայնքների ղեկավարներին թույլատրվել է շարունակել իրենց գործունեությունը մինչև ՏԻՄ ընտրություններ տեղի կունենան:

Ավագանու լիազորությունների ժամկետն ավարտվելուց հետո կամ՝ որոշում է կայացվել երկարաձգել նրանց գործունեության ժամկետը մինչև նոր ընտրություններ, կամ՝ վաղաժամ դադարեցվել է: Բազմաթիվ համայնքներ մեկ տարուց ավելի է ավագանի չունեն, իսկ ընտրված համայնքի ղեկավարին փոխարինել են ժամանակավոր պաշտոնակատարով: Այսինքն՝ այդ համայնքներում տեղական ինքնակառավարումը դադարեցվել է և կառավարումն իրականացվում է գործադիրի նշանակած պաշտոնակատարների միջոցով:

2016թ. ապրիլի 22-ին ՏԻՄ ընտրություններ էին տեղի ունեցել Հանրապետության 24 համայնքում, այդ համայնքապետերի պաշտոնավարման շրջանը նույնպես ավարտվել է: Անցնող ամիսներին Արարատի մարզի 5 գյուղական համայնքից 3-ում, լիազորությունների ժամկետը լրանալու կապակցությամբ, Արարատի մարզպետը համայնքի ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարներ է նշանակել նոր անձանց: Երկուսում պաշտոնակատար են նշանակվել գործող համայնքապետերը:

Արմավիրի մարզի 10 համայնքից 8-ում համայնքների ղեկավարների պաշտոնավարման ժամկետը լրացել է, և մարզպետի որոշումով երկարաձգվել է նրանց պաշտոնավարման շրջանը: Արմավիրի մարզի ևս երեք համայնքում՝ Ամբերդ, Նորապատ, Դողս, նոր պաշտոնակատարներ են նշանակվել:

Լրացել է նաև Արագածոտնի մարզի **Թալին և Վերին Սասնաշեն** համայնքների ղեկավարների պաշտոնավարման շրջանը: Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ներկայացրած նախագծով առաջիկայում Թալինը խոշորացվելու է նախկին շրջանով: Սակայն մինչև ընտրությունները, վարչապետը Թալին համայնքի նոր պաշտոնակատար նշանակեց Տավրոս Մափեյանին, իսկ Վերին Սասնաշեն համայնքի ղեկավարի պաշտոնավարման ժամկետը երկարաձգվեց:

Կոտայքի մարզի Քանաքեռավան և Գեղարքունիքի մարզի Զուլաքար համայնքներում պաշտոնակատարներ նոր անձինք նշանակվեցին:

Լոռու մարզում պաշտոնակատարներ են նշանակվել Սպիտակ և Սարամեջ համայնքներում: Սպիտակ համայնքը նույնպես խոշորացվելու է առաջիկայում, բայց մինչ այդ, վարչապետի որոշումով համայնքի ղեկավարի նոր պաշտոնակատար նշանակվեց:

Նշենք, որ Լոռու մարզի քաղաքային համայնքների մի քանիսում դեռևս անցյալ տարվանից վարչապետը պաշտոնակատարներ է նշանակում: Համայնքներից մի քանիսում նաև ավագանու

լիազորություններն են վաղաժամկետ դադարեցվել և այդ համայնքներում, ըստ էության, տեղական ինքնակառավարում չի իրականացվում:

Ստեփանավան համայնքում 2020թ. նոյեմբերի 24-ին համայնքի ղեկավարի պաշտոնակատար նշանակվեց, իսկ ավագանու լիազորությունները մինչ այդ՝ 20.08.2020թ.-ին, դադարեցվել էր: Թումանյան համայնքի ղեկավարի պաշտոնակատար նշանակվելուց առաջ ավագանու 9 անդամից 6-ը հրաժարական էր ներկայացրել, ուստի այս համայնքում նույնպես ավագանու լիազորությունները վաղաժամկետ դադարեցվել էր: Գյուլագարակ խոշորացված համայնքում նույնպես համայնքի ղեկավարի պաշտոնակատար է նշանակված:

Սահմանադրական դատարանը կքննի համայնքապետերի դիմումը

Համայնքների ընտրված ղեկավարներին պաշտոնակատարներով փոխարինելու տենդենցը սկսվել է 2018թ.-ի իշխանափոխությունից հետո: Համայնքների գործող ղեկավարներին հրաժարական տալ են հարկադրել քրեական գործեր հարուցելու միջոցով, քաղաքական հետապնդումների հետևանքով և վերջապես լիազորությունների ժամկետը լրանալու հիմքով: Այս ընթացքում եղան համայնքներ, որտեղ նաև պաշտոնակատարին նոր պաշտոնակատարով փոխարինեցին՝ Տաթև, Արամուս և այլ համայնքներում:

Այս տարվա փետրվարի 26-ին լիազորությունների ժամկետը լրանալու հիմքով համայնքի ղեկավարի պաշտոնակատարներ [նշանակվեցին](#) Դիլիջան, Թումանյան և Տաթև համայնքներում, իսկ ավագանու լիազորությունները երկարաձգվեցին: Նշված երեքը Հանրապետությունում առաջին խոշորացված համայնքներն են եղել, որտեղ 2016թ. փետրվարի 14-ին համայնքի ղեկավարի և ավագանու անդամների արտահերթ ընտրություն տեղի ունեցավ: Փետրվարի 14-ին այդ համայնքներում լրացել է տեղական ինքնակառավարման մարմինների՝ համայնքի ղեկավարի և ավագանու լիազորությունների ժամկետը, սակայն նոր ընտրություններ չնշանակվեցին, քանի որ մեր երկրում 2020թ. սեպտեմբերի 27-ին հայտարարված ռազմական դրությունը պահպանվում էր:

Նշենք, որ Դիլիջան, Թումանյան, Տաթև, Տաշիր, Ալավերդի, Արթիկ համայնքների ղեկավարները Կառավարության այս մտտեցումը խտրական վերաբերմունքի դրսևորում համարեցին և փետրվարի 14-ին դիմեցին Սահմանադրական դատարան (ՄԴ): Համայնքների ղեկավարները վիճարկում են 18.06.2020թ. խմբագրությամբ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2.1. մասին 11.07.2020թ. խմբագրությամբ «ՀՀ ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրության 2-րդ, 9-րդ, 179-րդ և 181-րդ հոդվածներին համապատասխանության հարցը:

Ավելի ուշ ՄԴ նույն բովանդակությամբ դիմում ներայացրեց Գեղարքունիքի մարզի Զուլաբար համայնքի [արդեն նախկին ղեկավար](#) Արման Ղազարյանը և ՄԴ-ն [որոշեց](#) միավորել համայնքների ղեկավարների դիմումները և քննել 2021թ. սեպտեմբերի 14-ին՝ գրավոր ընթացակարգով:

Հավանաբար, ՄԴ-ն կքննի ոչ միայն ավագանու և համայնքների ղեկավարների նկատմամբ Կառավարության դրսևորած խտրական վերաբերմունքը, այլև համայնքների ղեկավարների միջև դրսևորված խտրականությունը, երբ առանց հիմնավորելու մեկին թույլատրվեց շարունակել պաշտոնավարումը, իսկ մյուսին՝ ոչ:

Աշնանը ՏԻՄ ընտրություններ կանցկացվեն

Երկարատև ընդհատումից հետո, 2021թ. հոկտեմբերի 17-ին տեղական ինքնակառավարման ընտրություններ տեղի կունենան մեր երկրում: Համայնքի ղեկավարի և ավագանու ընտրություններ են նշանակված Արագածոտնի մարզի Շամիրամ և Լոռու մարզի Ֆիոլետովո համայնքներում: Արմավիրի մարզի Ֆերիկ համայնքում միայն ավագանու ընտրություններ կանցկացվեն: Այս համայնքներում ազգային փոքրամասնություններ են բնակվում՝ Շամիրամն ու Ֆերիկը եզդիական համայնքներ են, իսկ Ֆիոլետովոն մուլդանների բնակավայրն է:

2021թ. հոկտեմբերի 17-ին համամասնական ընտրակարգով ավագանու ընտրություններ տեղի կունենան

նաև **Շիրակի մարզի Գյումրի, Սյունիքի մարզի Գորիս, Մեղրի, Տաթև, Տեղ և Տավուշի մարզի Դիլիջան** համայնքներում:

Հիշեցնենք, որ Գորիս և Մեղրի համայնքների ղեկավարները, որոնք ընդդիմադիր «Հայաստան» դաշինքի աջակիցներն են և պատգամավորներ ընտրվեցին, արտահերթ խորհրդարանական ընտրություններից հետո կալանավորվեցին: Սյունիքի մարզի Տեղ, Տաթև և Տավուշի մարզի Դիլիջան համայնքներում տեղական ինքնակառավարման ընտրությունները տեղի են ունեցել 2016թ.-ին, և քանի որ դրանք արդեն խոշորացված համայնք են, հերթական ՏԻՄ ընտրությունները տեղի կունենան:

2016թ. հոկտեմբերի 2-ին առաջին անգամ համամասնական ընտրակարգով համայնքի ավագանու ընտրություններ տեղի ունեցան Գյումրի և Վանաձոր քաղաքներում: Այս անգամ ընտրություն է նշանակված միայն Գյումրի քաղաքում, քանի որ Վանաձորը միավորվելու է այլ համայնքների հետ, խոշորացնելու նախագիծն արդեն հրապարակել է ՏԿԵ նախարարությունը:

<https://hetq.am/hy/article/134969>

19.08.2021

ՄԻՊ-ը սեփական նախաձեռնությամբ վարույթ է սկսել 3 զինձառայողների մահվան դեպքով

Այսօր մահացու հրազենային վիրավորումներով 3 զինձառայողների մարմիններ հայտնաբերելու մասին տեղեկության հրապարակումից հետո Մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանն խոսել է Պաշտպանության նախարար Արշակ Կարապետյանի հետ: Այս մասին տեղեկացնում է ՄԻՊ աշխատակազմը:

«Նախարարը Մարդու իրավունքների պաշտանին ներկայացրել է դեպքի հետ կապված իրավիճակը: Ինչպես տեղեկացրել է Նախարարը, բացարձակ կեղծ է սոցիալական ցանցերով տարածված տեղեկությունը, թե մեր երեք զինձառայողների մահը ադրբեջանական կողմի դիվերսիոն ներթափանցման հետևանք է:

Հաշվի առնելով, որ խոսքը վերաբերում է մեր երկրի զինվորների իրավունքների, այդ թվում՝ մահացած զինձառայողների կյանքի իրավունքի պաշտպանությանը, Արման Թաթոյանի որոշմամբ սեփական նախաձեռնությամբ սկսվել է վարույթ: Միջադեպի հետ կապված՝ պարզաբանումներ ստանալու նպատակով գրություններ կուղարկվեն իրավասու պետական մարմիններին», - հայտնում է ՄԻՊ-ը:

<https://hetq.am/hy/article/134735>

16.08.2021

Այս պահին ադրբեջանական զինված ուժերը կրակում են Սոթքի լեռնանցքի ուղղությամբ. ՄԻՊ

ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանը իր ֆեյսբուքյան էջում գրել է.

«Ստացվող ահազանգերի համաձայն՝ այս պահին ադրբեջանական զինված ուժերը կրակում են Սոթքի լեռնանցքի ուղղությամբ:

Հատուկ նշում՝ կրակոցներն են այն վայրից են, որտեղ տեղակայված են հողմակները: Իսկ այդ տարածքը գտնվում է Գեղարքունիքի մարզի Գեղամասար համայնքի Սոթքի լեռնանցքի շրջանում (200 հա հողամաս), որը ՀՀ կառավարությունը 2000թ. դեկտեմբերի որոշմամբ տրամադրել է ՀՀ-ում իրավական գրանցում ունեցող ընկերությանը և կնքել 30 տարի ժամկետով վարձակալության պայմանագիր՝ ապահովելով գույքային իրավունքների պետական գրանցումը:

Այսինքն՝ ադրբեջանական զինված ուժերը անօրինական են ներկա ՀՀ գործարար ընկերությանը պատկանող տարածքում, որտեղից պարբերաբար են թիրախավորում Սոթքի ոսկու հանքավայրը, Գեղամասար համայնքը և ՀՀ զինված ուժերի ղիրքերը: Ընդ որում, իրենց անօրինական ներկայությամբ ՀՀ գործարար ընկերությանը նրանք պատճառել են շուրջ 5,000,000 ԱՄՆ դոլարի վնաս»:

<https://lurer.com/?p=430301&l=am>

16.08.2021

Զոհ Վարդենիսում. հակառակորդի դիպուկահարի կրակոցից 20-ամյա զինծառայող է մահացել

Վարդենիսի Կուրծ համայնքի տարածքում հակառակորդի դիպուկահարի կրակոցից 20-ամյա ժամկետային զինծառայող է զոհվել: Միջադեպը գրանցվել է փոխհրաձգության հետևանքով:

<https://www.armrusnews.am/>-ը փորձում է պարզել դեպքի մանրամասները:

Հիշեցնենք, որ ադրբեջանական կողմի սադրանքների հետևանքով այսօր հայկական կողմն արդեն երկու զոհ ունի. երկու զինծառայողներն էլ սպանվել են դիպուկահարկի կրակոցից:

Առավոտյան՝ ժամը 09:50-ի սահմաններում նախիջևանյան ուղղությամբ տեղի ունեցած փոխհրաձգության ընթացքում մահացու հրազենային վիրավորում էր ստացել ՀՀ ԶՈՒ N գորամասի զինծառայող, 1975թ. ծնված, ավագ ենթասպա Վահան Դիմիկի Թաթոսյանը՝ <https://www.armrusnews.am/?p=2566>

ՀՀ Պաշտպանության նախարարությունը միայն առավոտյան տեղի ունեցածի մասին էր հայտնել, իսկ Կուրծ համայնքում կատարվածի վերաբերյալ պաշտոնական հաղորդագրություն դեռևս չի տարածել:

<https://www.armrusnews.am/?p=2590>

16.08.2021

Աղբբեջանական զինուժը կրակում է Գեղարքունիքի մարզի Կուր եւ Նորաբակ գյուղերի վրա. ՄԻՊ

Աղբբեջանական զինված ուժերն այս պահին ուղիղ նշանառությամբ կրակում են Գեղարքունիքի մարզի Կուր գյուղի վրա: Ուղիղ կրակում են նաև Նորաբակ գյուղի վրա: Այս մասին հայտնում է Հայաստանի Սարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանը:

Ըստ նրա՝ կրակոցներն ինտենսիվ են ու տարբեր տրամաչափի զինատեսակներից: Բնակիչները փորձում են պատսպարվել:

«Աղբբեջանական զինված ուժերի այս արարքները հանցավոր են, ուղիղ դիտավորությամբ ուղղված են մարդկանց կյանքից զրկելուն, խաթարում են մարդկանց անվտանգությունն ու խաղաղությունը», - գրել է Արման Թաթոյանը:

Տեղեկությունը «Հետքի» հետ զրույցում ավելի ուշ [հաստատեց](#) նաև Գեղամասար համայնքի ղեկավար Հակոբ Ավետյանը:

<https://hetq.am/hy/article/134614>

16.08.2021

«Երկու գյուղերի բնակիչները փորձում են պատսպարվել, աղբբեջանցիները կրակում են մարդկանց սպանելու ուղիղ դիտավորությամբ»

Աղբբեջանական զինված ուժերն այս պահին ուղիղ նշանառությամբ կրակում են Գեղարքունիքի մարզի Կուր գյուղի վրա, ուղիղ կրակում են նաև Նորաբակ գյուղի վրա: Այս մասին ֆեյսբուքյան իր էջում հայտնել է ՀՀ ՄԻՊ Արման Թաթոյանը:

«Կրակոցները ինտենսիվ են ու տարբեր տրամաչափի զինատեսակներից: Բնակիչները փորձում են պատսպարվել:

Աղբբեջանական զինված ուժերի այս արարքները հանցավոր են, ուղիղ դիտավորությամբ ուղղված են մարդկանց կյանքից զրկելուն, խաթարում են մարդկանց անվտանգությունն ու խաղաղությունը», - նշել է Թաթոյանը:

<http://republica.am/Home/News/26262>

11.08.2021

Գեղարքունիքի և Սյունիքի գյուղերում աղբբեջանական զինժառայողներն արձակում են հատուկ լուսարձակող կրակոցներ, որ քաղաքացիական բնակչությանն ահաբեկեն. ՄԻՊ

ՀՀ ՄԻՊ Արման Թաթոյանը գրում է. «Գեղարքունիքի և Սյունիքի գյուղերից պարբերաբար ստանում ենք ահազանգեր այն մասին, որ աղբբեջանական զինժառայողները կրակոցներ են արձակում նաև հարբած վիճակում:

Ընդ որում, այս դեպքում կրակոցները հատուկ լուսարձակող են ու արվում են այնպես, որ տեսանելի լինի քաղաքացիական բնակչության համար՝ ահաբեկելու նպատակով: Այդ դեպքերում գիշեր ժամանակ հաճախ միացնում են բնակիչներին անհանգստություն պատճառող բարձր երաժշտություն, գորգոռում, այսինքն՝ կատարում են խուլիգանական արարքներ:

Նման ահազանգեր ստանում ենք 2020թ. դեկտեմբերից սկսած: Խոսքը այն գյուղերի մասին է, որոնց անմիջական հարևանությամբ ադրբեջանական զինված ուժերը միջազգային իրավունքի պահանջների կոպիտ խախտումներով տեղակայվել են պատերազմից հետո ու հատկապես 2021թ. մայիսի 12-13-ի ՀՀ ինքնիշխան տարածք անօրինական ներխուժումներից հետո:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի կողմից նշված ահազանգերի ուսումնասիրությունները վկայում են, որ ադրբեջանական կրակոցները դադարում են ՀՀ զինված ուժերի բնակչությանը պաշտպանող կանխարգելիչ գործողություններից հետո»:

<https://livenews.am/press/2021/126105/11/12/21/>

06.08.2021

Սկանդալային տեսանյութ՝ Ոստիկանության Մարտունու բաժնի պետի մասնակցությամբ

Զուլաքարի գյուղապետարանում կրքերը չեն հանդարտվում:

Yerkir.am-ի լրագրողի նկարահանած կադրերում՝ նիկոլական ոճի հրամաններ տվող անձը Գեղարքունիքի մարզային վարչության Մարտունու բաժնի պետն է՝ Ստեփան Հակոբյանը:

Ինչպես տեսնում եք՝ ջանասիրաբար հարվածում եւ գետնին քարշ տալով բերման է ենթարկում խաղաղ անհնազանդության ակցիա իրականացնող գյուղացիներին, որոնց պահանջն է՝ հեռացնել, իրենց խոսքով ասած, նորանշանակ անգրագետ գյուղապետի ժ/պ Մխիթար Մկրտչյանին եւ օրենքի սահմաններում լիազորել նախկին համայնքապետ Արման Ղազարյանին՝ պաշտոնավարել մինչեւ ՏԻՄ ընտրությունները:

Մանրամասները՝ տեսանյութում. <https://www.youtube.com/watch?v=ueGM1MtbJQQ&t=25s>

<http://yerkir.am/news/view/246067.html>

04.08.2021

Գեղարքունիքի հատվածում արձանագրվել է հակառակորդի ԱԹՄ-ի՝ ՀՀ օդային տարածք մուտք գործելու փորձ. ՊՆ

Օգոստոսի 4-ին, ժամը 11:00-ի սահմաններում, հայ-ադրբեջանական սահմանի Գեղարքունիքի հատվածում արձանագրվել է հակառակորդի ԱԹՄ-ի՝ ՀՀ օդային տարածք մուտք գործելու փորձ: ՀՀ ԶՈՒ հակաօդային պաշտպանության ստորաբաժանումների գործողությունների արդյունքում փորձը կասեցվել է:

Այս մասին հայտնում է ՀՀ պաշտպանության նախարարությունը:

<https://livenews.am/press/2021/124826/04/14/12/>

03.08.2021

ՀՀ-ում Իրանի դեսպանն ու ռազմական կցորդը այցելել են Գեղարքունիքի մարզ

Օգոստոսի 3-ին ՀՀ-ում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Աբբաս Բադախշան Ջոհուրին և ՀՀ-ում ԻԻՀ դեսպանության ռազմական կցորդ, գնդապետ Բահման Մադեդինը ՀՀ ՊՆ ներկայացուցիչների ուղեկցությամբ այցելել են Գեղարքունիքի մարզ:

ՊՆ տեղեկացմամբ, զորամիավորման հրամանատար, գեներալ-մայոր Արայիկ Հարությունյանը դեսպանին ներկայացրել է հայ-ադրբեջանական սահմանին տիրող իրավիճակը, որից հետո կազմակերպվել է այց Վերին Շորժայի հատվածի սահմանագիծ:

Հայաստանի Հանրապետությունում ԻԻՀ արտակարգ և լիազոր դեսպանը, մտահոգություն հայտնելով երկու երկրների սահմանային վեճերի շարունակության կապակցությամբ ընդգծել է երկու կողմերի զսպվածության և երկու երկրների միջև վեճերի խաղաղ կարգավորման անհրաժեշտությունը: Նա իր ցավակցությունն է հայտնել վերջին ընդհարումների ընթացքում զոհված զինձառայողների ընտանիքներին:

Պարզաբանելով բոլոր կողմերի՝ միջազգայնորեն ճանաչված սահմանները հարգելու անհրաժեշտությունը, դեսպան Ջոհուրին նշել է, որ Հարավային Կովկասում տևական խաղաղության ապահովումը բխում է տարածաշրջանի ժողովուրդների շահերից և հայտնել Իրանի Իսլամական Հանրապետության պատրաստակամությունը՝ աջակցելու տարածաշրջանում տևական խաղաղության հաստատման հարցում:

<https://livenews.am/press/2021/124660/03/17/59/>

02.08.2021

Գնել Սանոսյանը նշանակվել է ՏԿԵ նախարար

ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանը հրամանագիր է ստորագրել Գնել Սանոսյանին տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար նշանակելու վերաբերյալ:

«Հիմք ընդունելով վարչապետի առաջարկությունը՝ համաձայն Սահմանադրության 150-րդ հոդվածի.

Գնել ՍԱՆՈՍՅԱՆԻՆ նշանակել տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար», -ասված է հրամանագրում:

Հիշեցնենք, որ մինչ այս Գնել Սանոսյանը զբաղեցնում էր Գեղարքունիքի մարզպետի պաշտոնը և այդ պաշտոնից ազատվել էր այսօր:

<http://yerkir.am/news/view/245753.html>

01.08.2021

ՄԻՊ Արման Թաթոյանի աշխատանքային խմբի փաստահավաք աշխատանքները Գեղարքունիքի մարզում

Մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանը փաստահավաք աշխատանքներ է իրականացրել ՀՀ Գեղարքունիքի մարզի սահմանամերձ շրջաններում: Այս մասին հայտնում են ՄԻՊ ֆեյսբուքյան [էջում](#):

«Մարդու իրավունքների պաշտպան Արման Թաթոյանի գլխավորած աշխատանքային խմբի փաստահավաք աշխատանքները կապված ադրբեջանական զինված ուժերի անօրինական արարքների պատճառով ՀՀ Գեղարքունիքի մարզի Վերին Շորժա գյուղի և սարատեղի բնակավայրի, Սոթք, Կուլթ, Նորաբակ, Ջաղացածոր, Գեղամաբակ գյուղերի բնակիչների իրավունքների խախտումներ հետ:

Այցի սկզբում Վարդենիս համայնքի ղեկավար Արամ Մելքոնյանը ներկայացրեց քաղաքում տեղի ունեցող կարևոր աշխատանքները, ինչպես նաև նրա հետ միասին տեղի ունեցան հանդիպումներ բնակիչների հետ:

Այցը տեղի է ունեցել Վարդենիս համայնքի ղեկավար Արամ Մելքոնյանի, Վերին Շորժա վարչական շրջանի ղեկավար Արտյոմ Երանոսյանի, Գեղամասար համայնքի ղեկավար Հակոբ Ավետյանի, Գեղարքունիքի մարզպետարանի պատասխանատու ներկայացուցչի հետ միասին»:

<http://yerkir.am/news/view/245674.html>

01.08.2021

Գեղարքունիքի մարզում հիվանդին տեղափոխող շտապօգնության ավտոմեքենան վթարի է ենթարկվել. հիվանդը տեղում մահացել է

Այսօր՝ օգոստոսի 1-ին, ողբերգական ավտովթար է տեղի ունեցել Գեղարքունիքի մարզում: Այս մասին հայտնում է shamshyan.com-ը:

Ժամը 02:00-ի սահմաններում Երևան-Սևան իջևան ավտոճանապարհի 57-րդ կմ հատվածում բախվել են Տավուշի մարզի բնակիչ, 55-ամյա Գնել Հարությունյանի վարած Jinbei մակնիշի և Գեղարքունիքի մարզի բնակիչ, 44-ամյա Համլետ Խանգադյանի վարած Mercedes մակնիշի ավտոմեքենաները:

Բախման հետևանքով Jinbei-ը կողաշրջվել է: Ֆոտոլրագրողի տեղեկություններով՝ նշված ավտոմեքենան հաշվառված է Տավուշի մարզի Բերդ քաղաքի «Բերդ» բժշկական կենտրոնում՝ որպես շտապօգնության ավտոմեքենա և Տավուշի մարզից ծայրահեղ ծանր ախտորոշմամբ հիվանդին՝ Բերդ քաղաքի բնակիչ, 60-ամյա Սուսանա Գևորգյանին տեղափոխում էին Երևանի հիվանդանոցներից մեկը: Կողաշրջման հետևանքով Ս. Գևորգյանը տեղում մահացել է, իսկ նրա քույրը՝ 62 ամյա Սվետլանա Գևորգյանը, ով նույնպես եղել է շտապօգնության ավտոմեքենայի մեջ, մարմնական վնասվածքներով օպերատիվորեն ժամանած Սևանի բժշկական կենտրոնի բժիշկների կողմից նախ տեղում առաջին բուժօգնությունն է ստացել, ապա տեղափոխվել «Սևան» բժշկական կենտրոն:

Գ. Շամշյանի տեղեկություններով՝ վթարի մեղավորը եղել է Mercedes-ի վարորդը, ով վթարի վայրի հարևանությամբ գործող գազալցակայանից դուրս է եկել և չթույլատրելի հատվածով հատել է ճանապարհը, վթարային իրավիճակ է ստեղծել վարորդների համար, ապա բախվել շտապօգնության ավտոմեքենային:

Շտապօգնության ավտոմեքենան եղել է լուսաձայնային ազդանշանները միացրած, վարորդը պահպանել է ճանապարհային երթևեկության անվտագության կանոնները:

<https://news.am/arm/news/656278.html>